ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 19-21-Ը ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ (Ք. ԺՆԵՎ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

1. <u>Անունը, ազգանունը՝</u>

Արմեն Սիմոնյան

2. <u>Զբաղեցրած պաշտոնը՝</u>

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. <u>Գործուղման վայրը և ժամկետները.</u>

2024թ փետրվարի 19-21-ը Շվեյցարական Համադաշնություն, ք.Ժնև

4. <u>Հրավիրող կողմը.</u>

ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով:

5. <u>Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).</u>

ԵՏՀ ներքին տրանսպորտի կոմիտեի 86-րդ նստաշրջանի մասնակցություն

6. <u>Քննարկված թեմաները.</u>

Միջոցառման ժամանակ քննարկվել են մինչև 2050 թվականն առանց արտանետումների ներքին տրանսպորտ ունենալու համար հավակնոտ գործողությունների ձեռնարկումը, ճանապարհային անվտանգության կառավարման ազգային հաջողված օրինակները և ցածր ու միջին եկամուտ ունեցող երկրներին աջակցությունը՝ ճանապարհային անվտանգության իրենց նպատակներին հասնելու համար, ինչպես նաև կայուն փոխադրումների հետ կապված լավագույն փորձին, մարտահրավերներին և լուծումներին վերաբերող հարցեր: Մասնակցել եմ նաև «Ներքին տրանսպորտի թվային և կանաչ անցման խթանումը՝ ի աջակցություն Կայուն զարգացման օրակարգի» խորագրով կլոր սեղանի քննարկումներին:

7. <u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.</u>

Հանդիպել եմ UNECE (ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով) գործադիր քարտուղարի տեղակալ Դմիտրի Մարյասինի և Կայուն տրանսպորտի բաժնի ղեկավար Հյուվեյ Լիի հետ, քնարկվել են ճանապարհային տրանսպորտին առնչվող օրակարգային հարցեր:

Հանդես եմ եկել ելույթով՝ ՀՀ-ում տրանսպորտային միջոցներից ջերմոցային գազերի արտանետումների կրճատման ուղղությամբ Կառավարության կողմից վարվող քաղաքականության վերաբերյալ:

Ներկայացրել եմ ՀՀ Կառավարության կողմից մշակված «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը:

8.<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.</u>

Ստորագրված փաստաթղթեր չկան:

9. <u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u>

10. <u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>

26.02.2024թ.